ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 2
09.10.2024 Թ. ԿՆՔՎԱԾ ԹԻՎ ԿԿ-ԳՀԾՁԲ-25/10 ԿԱՐՃ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (SMS) ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան **« » նոյեմբեր 2025թ.**

Կադաստրի կոմիտեն, ի դեմս գլխավոր քարտուղար Մ. Խաչատրյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Նիկիտա Մոբայլ » ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Օ. Ազարումյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, հիմք ընդունելով 2024 թվականի հոկտեմբերի 9-ին կնքված կարճ հաղորդագրությունների (SMS) ծառայությունների մատուցման թիվ ԿԿ-ԳՀԾՁԲ-25/10 պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 կետը և ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգի» 56-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված պահանջները՝ որոշեցին.

1. <u>ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ</u>

1.1 Պայմանագրին կից թիվ 1 համաձայնագրի հավելվածներում կատարել փոփոխություններ՝ համաձայն սույն համաձայնագրի հավելվածի:

2. <u>ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏը</u>

2.1 Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում և Կողմերի համար պարտադիր է դառնում համաձայնագիրը հաշվառվելու պահից:

2.2 Կողմերի միջև նախկինում ձեռքբերված բոլոր գրավոր համաձայնությունները գործում են այնքանով, որքանով չեն հակասում սույնՀամաձայնագրի դրույթներին:

3. <u>ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ</u>

3.1 Կողմերը պատասխանատվություն են կրում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

3.2Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.3 Սույն Համաձայնագիրը կազմված է 1 էջից և 2 հավելվածներից, որոնք համաձայնագրի անբաժանելի մասն են կազմում: Համաձայնագիրը կնքվում է 2 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3.4 Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**
Կադաստրի կոմիտե ք. Երևան, Արշակունյաց 7 ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն Հ/Հ 900011030815 ՀՎՀՀ 02534328	Նիկիտա մոբայլ ՍՊԸ ք. Երևան, Ահարոնյան 2, 5-րդ հարկ Կոնվերսբանկ ՓԲԸ Հ/Հ 1930009490430100 ՀՎՀՀ 02701579
Գլխավոր քարտուղար՝----------Մ. Խաչատրյան (ստորագրություն) Կ.Տ.	Տնօրեն՝---------- Օ. Ազարումյան (ստորագրություն) Կ.Տ.

KHACHATRYAN MHER 4108790022

Digitally signed by KHACHATRYAN MHER 4108790022
DN: c=AM, sn=••••••••, givenName=••••, serialNumber=a01dee20981, cn=KHACHATRYAN MHER 4108790022
Date: 2025.11.18 12:15:58 +04'00'

Digitally signed by AZARUMYAN OFELYA 6911850576
Date: 2025.11.17 16:47:32 AMT

Հավելված 1
թիվ 2 համաձայնագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	Ժամկետը**
1	64211140/2	ներկայացված է ստորև	դրամ	1 200 000	1	ներկայացված է ստորև	համաձայնագրի հաշվառման պահից մինչև 25.12.2025թ.

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

(կարճ հաղորդագրությունների (SMS) ուղարկման ծառայություններ)

Ձեռքբերվող Ծառայության նկարագիր

SMS-հաղորդագրություններ ուղարկելու ծառայության իրականացում

Ծառայության մատուցումը նպատակ ունի ապահովել դիմումատուներին ծանուցել իրենց դիմումի պատրաստ լինելու մասին և հետևել իրենց դիմումի ընթացքին՝ sms-հաղորդագրությունների միջոցով ուղարկված դիմումի բանալին մուտքագրելով կայքում:

Հարթակի կառուցվածքը

1. SMS ծանուցում ուղարկել դիմումատուներին (հայատառ կամ լատինատառ) առ այն, որ տվյալ բանալիով դիմումի պատասխանը պատրաստ է
2. Սեփականատերերին կամ գրավառուներին անշարժ գույքերի նկատմամբ համակարգ մուտքագրված իրավունքների պետական գրանցման կամ դրանց դադարման և միասնական տեղեկանքի տրամադրման դիմումների ու դրանց հիման վրա կայացված որոշումների վերաբերյալ SMS ծանուցում (հայատառ կամ լատինատառ)
3. Հարթակը պետք է ապահովի MNP (Շարժական կապի հեռախոսահամարի տեղափոխում) հեռախոսահամարներին SMS ծանուցում ուղարկելու հնարավորությունը
4. հաշվետվություններ ստացված հաղորդագրությունների վերաբերյալ

SMS-ծանուցումներ ուղարկելու են այս ճանապարհով՝

նկար 1.

Կադաստր Սերվեր Կապի օպերատոր Դիմումատու

SMS հաղորդագրություններում ներառվող տեքստի բովանդակությունը սահմանված է Հավելված 1-ով, որը անհրաժեշտության դեպքում կարող է պատվիրատուի կողմից փոփոխության ենթարկվել:

Հաշվետվություններ ստացված հաղորդագրությունների վերաբերյալ և ընդհանուր պահանջներ

- Պետք է ստեղծվի ստացված հաղորդագրությունների վերաբերյալ հաշվետվական այնպիսի գործիքակազմ, որը թույլ կտա ստանալ անհրաժեշտ հաշվետվություն անմիջապես, ըստ ժամանակահատվածի, հեռախոսահամարի և նրանց համադրության:
- Համակարգի աշխատունակությունը ապահովող նվազագույն տեխնիկական պահանջների նկարագրությունը:

Կատարողը իրականացնում է

- Ներդրման/տեղակայման և կարգաբերման աշխատանքները
- Էլեկտրոնային կապուղու ապահովում

SMS հաղորդագրություններում ներառվող տեքստի բովանդակությունը

1. Ձեր գույքը հաշվառված է: Չափագրման ծածկագիրն է՝ «ծածկագիր»,
2. Հասցեի որոշումը դիտելու համար այցելեք www.e-cadastre.am/application/docview և «Հասցե տրամադրելու մասին որոշման դիտում» պատուհանում մուտքագրեք «ծածկագիր»,
3. Ավարտական փաստաթուղթ՝ «փաստաթղթի համարը», գաղտնաբառ՝ «գաղտնաբառ»
4. N «Վկայականի համար» վկայականով անշարժ գույքի նկատմամբ ներկայացվել է իրավունքի պետական գրանցման դիմում:
5. Ձեր իրավահաստատող փաստաթղթի ծածկագիրն է «ծածկագիր»: www.e-cadastre.am/application/docview

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Կադաստրի կոմիտե
ք. Երևան, Արշակունյաց 7
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն
Հ/Հ 900011030815
ՀՎՀՀ 02534328

Գլխավոր
քարտուղար՝----------Մ. Խաչատրյան
(ստորագրություն)
Կ.Տ.

KHACHATRYAN MHER 4108790022

Digitally signed by KHACHATRYAN MHER 4108790022
DN: c=AM, sn=••••••••••, givenName=••••, serialNumber=a01dee20981, cn=KHACHATRYAN MHER 4108790022
Date: 2025.11.18 12:16:31 +04'00'

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

Նիկիտա մոբայլ ՍՊԸ
ք. Երևան, Ահարոնյան 2, 5-րդ հարկ
Կոնվերսբանկ ՓԲԸ
Հ/Հ 1930009490430100
ՀՎՀՀ 02701579

Տնօրեն՝---------- Օ. Ազարումյան
(ստորագրություն)

Կ.Տ.

Digitally signed by AZARUMYAN OFELYA 6911850576
Date: 2025.11.17 16:47:07 AMT

Հավելված 2
թիվ 3 համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության					
հրավերով նախատես. չ/Բ համարը	գնումների պլանով նախատես.միջոցառման ծածկ. ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2025 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում		
			նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	64211140/2	կարճ հաղորդագրությունների (SMS) ուղարկման ծառայություններ	600 000	1 200 000	1 200 000

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

Կադաստրի կոմիտե
ք. Երևան, Արշակունյաց 7
ՀՀ ՖՆ Գործառնական վարչություն
Հ/Հ 900011030815
ՀՎՀՀ 02534328

Գլխավոր
քարտուղար՝----------Մ. Խաչատրյան
(ստորագրություն)

KHACHATRYAN MHER 4108790022

Digitally signed by KHACHATRYAN MHER 4108790022
DN: c=AM, sn=••••••••, givenName=••••, serialNumber=a01dee20981, cn=KHACHATRYAN MHER 4108790022
Date: 2025.11.18 12:17:06 +04'00'

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

Նիկիտա Մոբայլ ՍՊԸ
ք. Երևան, Ահարոնյան 2, 5-րդ հարկ
Կոնվերսբանկ ՓԲԸ
Հ/Հ 1930009490430100
ՀՎՀՀ 02701579

Տնօրեն՝---------- Օ. Ազարումյան
(ստորագրություն)

Կ.Տ.

Digitally signed by AZARUMYAN OFELYA 6911850576
Date: 2025.11.17 16:46:39 AMT